

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԻՍԼԱՆԴԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իսլանդիայի կառավարությունը, (այսուհետ՝ «Կողմեր»),

լինելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիայի մասնակից կողմեր, որը ստորագրման համար բացվել է Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ին,

ցանկանալով կնքել Համաձայնագիր՝ իրենց պետությունների միջև կանոնավոր օդային հաղորդակցությունների հաստատելու նպատակով ,

ցանկանալով խթանել միջազգային ավիացիոն համակարգը, հիմք ընդունելով շուկայում ավիաընկերությունների միջև մրցակցությունը՝ կառավարության կողմից նվազագույն ներգործությամբ և կարգավորմամբ,

ցանկանալով նպաստել միջազգային օդային հաղորդակցությունների հնարավորությունների ընդլայնմանը,

ցանկանալով ապահովել միջազգային օդային հաղորդակցությունների թռիչքային և ավիացիոն անվտանգության բարձրագույն աստիճանը և վերահաստատելով իրենց խորը մտահոգվածությունը օդանավերի անվտանգությանն ուղղված գործողություններով կամ սպառնալիքներով, որոնք վտանգում են անհատների կամ նրանց ունեցվածքի ապահովությունը, բացասաբար ներգործում են օդային հաղորդակցությունների իրականացման վրա և խարխալում են քաղաքացիական ավիացիայի թռիչքային անվտանգության նկատմամբ հասարակության վստահությունը,

պայմանավորվում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի հետևում, հասկացությունը.

1. «Ավիացիոն իշխանություններ» նշանակում է Հայաստանի Հանրապետության պարագայում նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը և Իսլանդիայի պարագայում Իսլանդիայի հաղորդակցությունների նախարարությունը և ցանկացած անձ կամ գործակալություն, որը կլիազորվի նշված իշխանությունների գործառույթները իրականացնելու համար:

2. «Համաձայնագիր» նշանակում է սույն Համաձայնագիրը, նրա Հավելվածները, որոնք հանդիսանում են նրա անբաժանելի մասը:
3. «Կոնվենցիա» նշանակում է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիան, որը ստորագրման համար բացվել է Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ին, և ներառում է. Կոնվենցիայի Հոդված 94(a)-ի համաձայն ուժի մեջ մտած ցանկացած փոփոխություն և վավերացվել է երկու Կողմերի կողմից, և Կոնվենցիայի Հոդված 90-ի համաձայն ընդունված ցանկացած հավելված կամ դրա ցանկացած փոփոխություն, այնքանով, որքանով այդ հավելվածները կամ փոփոխությունները որոշակի ժամանակ ուժի մեջ են երկու Կողմերի համար,
4. «Նշանակված ավիաընկերություն» նշանակում է ավիաընկերություն, որը նշանակվել և լիազորվել է սույն Համաձայնագրի Հոդված 3-ի համաձայն,
5. «Եվրոպական տնտեսական գոտի» նշանակում է ընդլայնված ազատ առևտրի գոտի, հիմնադրված 1992 թվականի մայիսի 2-ին Օպորտոյում Եվրոպական տնտեսական գոտու համաձայնագրով՝ մի կողմից Եվրոպական Համայնքի և նրա Անդամ երկրների և մյուս կողմից ԵԱԱԳ անդամ երկրների միջև, բացառությամբ Շվեյցարիայի, կնքված համաձայնագրի համաձայն: ԵԱԱԳ-ն Եվրոպական ազատ առևտրի գործակալության հասպտումն է, որի անդամ երկիր է հանդիսանում Իսլանդիայի Հանրապետությունը,
6. «Ամբողջական արժեք» նշանակում է մատուցվող ծառայությունների արժեք գումարած գործառնական բանական ծախսերը:
7. «Միջազգային օդային հաղորդակցություն» նշանակում է օդային հաղորդակցություն որն անցնում է մեկից ավել երկրների օդային տարածքով:
8. «Գին» նշանակում է ավիաընկերության կողմից օդային հաղորդակցությունում ուղևորների (և նրանց ուղեբեռի) և/կամ բեռի (բացառությամբ՝ փոստի) փոխադրման համար գանձվող ցանկացած սակագին, դրույք կամ վճար՝ ներառյալ նրանց գործակալներին և նման սակագնի, դրույքի կամ վճարի առկայությունը կառավարող պայմանները:
9. «Ոչ առևտրային նպատակներով կանգառ», «ավիաընկերություն», «օդային հաղորդակցություն» և «տարածք» ունեն Կոնվենցիայի Հոդվածներ 2-ում և 96-ում ներկայացված նշանակությունը, և
10. «Սպառողի վճարներ» նշանակում է վճար/վճարներ, որոնք գանձվում են ավիաընկերություններից օդանավակայանային, աերոնավիզացիոն կամ ավիացիոն անվտանգության միջոցների կամ ծառայությունների՝ ներառյալ դրանց առնչվող ծառայությունների և միջոցների տրամադրման դիմաց:

ՀՈԴՎԱԾ 2

Իրավունքների տրամադրում

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի նշանակված ավիաընկերություններին տրամադրում է միջազգային օդային հաղորդակցությունների իրականացման համար հետևյալ իրավունքները.

ա) առանց վայրէջքի իր պետության տարածքի վրայով թռչելու իրավունք,